ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, THEOLOGY, БОГОСЛОВИЕ

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ԴԻՍԿՈՒՐՍԸ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ *

ՀՏԴ 271.72:070 DOI: 10.52063/25792652-2026.1.27-137

ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ
Հայաստանի Հանրապետության Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հայրենադարձների ինտեգրման վարչության ավագ մասնագետ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anul.asatryan.93@gmail.com
ORCID: 0000-0001-9630-1200

Հոդվածի նպատակն է 19-րդ դարի վերջին տասնամյակում հայ հասարակության շրջանում լայնորեն շրջանառվող «Քահանայական հարցի» վերաբերյալ հայ կրոնագիտական և պարբերական մամուլում քննարկվող տեսակետների ուսումնասիրությունն ու Մայր Աթոռի միաբան, աստվածաբան, քննարկվող ժամանակաշրջանում Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» հանդեսի խմբագիր Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի մոտեցումների ներկայացումն ու վերլուծությունը:

«Արարատ» հանդեսում 1895-1900 թթ. Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի կողմից տպագրված հոդվածների վերլուծության միջոցով ներկայացվել են վերջինիս մոտեցումները Հայ եկեղեցու և եկեղեցականի դերի, հոգևոր դասի բարեկարգման, կուսակրոն հոգևորականության գոյության և անհրաժեշտության վերաբերյալ:

Քննարկվող ժամանակաշրջանի հայ հրապարակախոսական մամուլում շրջանառվող կարծիքների վերհանման նպատակով իրականացրել ենք Թիֆլիսում տպագրվող «Մշակ» և Կ. Պոլսում տպագրվող «Հայրենիք» օրաթերթերի ուսումնասիրությունը:

Հրապարակախոսական մամուլի վերոհիշյալ թերթերի ընտրությունը պայմանավորված է վերջիններիս՝ հայ ազգաբնակչության համապատասխանաբար Արևելյան և Արևմտյան հատվածներում հասարակական կարծիքի ձևավորման վրա ունեցած անհերքելի ազդեցությամբ: Սույն ուսումնասիրությունն իրականացնելիս կիրառել ենք իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացման և համադրմամբ վերլուծության մեթոդները:

Այսպիսով, ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ կատարելով հրապարակախոսական մամուլի էջերում տեղ գտած, ինչպես Հայ եկեղեցու հոգևոր դասի ներսում, այնպես էլ հոգևոր-աշխարհիկ դասերի քննարկումներում «Քահանայական հարցի» վերաբերյալ ձևավորված երկխոսությանը և համակողմանի քննության առնելով Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի հրապարակախոսական գործունեությունն ու տեսակետը վերոհիշյալ հարցի առնչությամբ՝ կարող ենք փաստել, որ վերջինս քննարկվող հարցին ցուցաբերել է հնարավորինս օբյեկտիվ մոտեցում՝ հոգևորականի իր

* Հոդվածը ներկայացվել է 09.02.2026թ., գրախոսվել՝ 02.03.2026թ., տպագրության ընդունվել՝ 31.05.2026թ.:

դիրքերից չհերքելով Հայ եկեղեցու և հոգևոր դասի ներսում առկա խնդիրները: Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, իր հրապարակումներում մատնացույց անելով վերոնշյալ խնդիրների առկայությունը, իբրև խնդրի լուծման հիմնական տարբերակ առաջ է քաշել հայկական իրականության մեջ կրթական գործի բարեկարգման կարևորությունը՝ ինչպես հայ հոգևոր դասի ներսում, այնպես էլ հայ ընդհանրական հասարակության շարքերում: Հայ եկեղեցու և հասարակության միջև ձևավորված անջրպետը, որն առավել ակնառու էր 19-րդ դարավերջին, Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի դիտարկմամբ կարելի էր վերացնել հայկական իրականության մեջ կրթական համակարգի բարեկարգման և հայ հասարակության կրթական մակարդակի լավարկման միջոցով:

Հիմնաբառեր՝ *Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, «Քահանայական հարց», «Արարատ», «Մշակ», «Հայրենիք», կրոնավոր, աստվածաբան, կղեր, հոգևորական:*

Ներածություն

19-րդ դարի վերջին տասնամյակում հատկապես հայ հասարակության լայն շերտերին զբաղեցնող հարցերից էր «քահանայական հարցը», որի վերաբերյալ բազմապիսի քննարկումներն ու տարակարծիք տեսակետների արծարծումը հոդվածների և նամակների տեսքով չէր իջնում ժամանակի հայ մամուլի նշանավոր թերթերի («Մշակ», «Հայրենիք» ևն), ինչպես նաև Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» հանդեսի էջերից:

Ի՞նչ է պետք հասկանալ «քահանայական հարց» ասելով. այն Հայ եկեղեցու հոգևորականության, կուսակրոն հոգևոր դասի անհրաժեշտության, քահանաների գործառույթների վերաբերյալ հասարակության շրջանում տարածված և քննարկվող հարցերի, հարցադրումների ընդհանրական անվանումն է, որով փորձ էր արվում քննարկվող ժամանակաշրջանում ձևակերպելու և ներկայացնելու իրականում շատ բազմաշերտ, խորը և համակողմանի ուսումնասիրության կարոտ այս խնդիրը:

Եթե քահանաների, կուսակրոն հոգևորականության և ընդհանրապես Հայ եկեղեցու, հայ հոգևորականի կերպարի վերաբերյալ տարատեսակ քննարկումները արևելահայ հասարակության շրջանում հիմնականում «Մշակի» էջերում, իսկ արևմտահայության շրջանում՝ «Հայրենիքի» էջերում ծավալվում էին դեռևս 19-րդ դարի 80-ական թվականներից, ապա Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատում» մինչև 1895 թվականը չենք հանդիպում ուսումնասիրվող թեմային վերաբերող հրատարակված նյութերի կամ հակադարձումների՝ հոգևոր դասին վերագրվող մեղադրանքների, տարատեսակ խոսակցությունների վերաբերյալ: 1895 թվականից սկսած՝ «Արարատի» համարների ուսումնասիրության արդյունքում նկատելի է հստակ ընդգծված փոփոխություն: Սա, մեր կարծիքով, պայմանավորված էր աստվածաբանական կրթություն ստացած առաջին հայ հոգևորականների վերադարձով Մայր Աթոռ: Գերմանիայում ավարտելով իր հնգամյա ուսումնառության շրջանը՝ 1894թ. օգոստոսին Էջմիածին էր վերադարձել Կարապետ սարկավագ Տեր-Մկրտչյանը: Նա առաջին հայ աստվածաբանն էր, որը, Գևորգ Չորեքչյանի (Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ Չորեքչյան-Ա. Ա.) հետ ստանալով Մակար Ա Թեղուտցի Հայոց հայրապետի օրհնությունը, մեկնեց Գերմանիա՝ աստվածաբանություն ուսանելու (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 312, ց. 1, գ. 27, թ. 1; Օրմանեան 4579-4583; Տէր-Մինասեանց 9; Վաւերագրեր, գիրք ԺԴ 434-435): Արդեն 1894թ. դեկտեմբերին Կարապետ աբեղան նշանակվում է Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատի» կրոնական բաժնի խմբագիր (*Պաշտօնական*, Արարատ, 1894, 388-389), իսկ մինչ 1899 թ. զբաղեցրել է «Արարատի» գլխավոր խմբագրի պաշտոնը

(«Քրիստոնյա Հայաստան» 1010): Վերոհիշյալ շրջանից սկսած՝ «Արարատի» խմբագրությունը, ի դեմս Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի, փորձում էր օբյեկտիվության դիրքերից մոտենալ խնդրին և հնարավորինս բացառելով սուբյեկտիվ դիտարկումներ անելու պրակտիկան՝ հարցին մոտենում էր գիտականության հենքից՝ ընդունելով տարատեսակ բացթողումների և խնդիրների առկայությունը Հայ եկեղեցում: Այս շրջանում փորձ արվեց խնդրին անդրադառնալու այն մոտեցմամբ, որ հոգևորականներին ևս հուզում էր խնդիրը և, մեր կարծիքով, Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի գլխավորությամբ կոտրվեց այն կարծրատիպը, որ Մայր Աթոռի միաբանությունը, «Արարատի» խմբագրությունը անհաղորդ էին հասարակությանը և տեղյակ չէին, թե իրականում ինչ է կատարվում Մայր Աթոռի պատերից դուրս (Մեր պահանջը 3; «Արարատը» երեխաների ձեռքում 2; Մի քանի խօսք 2; Հանգիստ թողէք 2-3; Մենք ժողովրդի հետ 1-2; Սարգսեանց, Վեղարաւորը մեր կեանքում №79 1-2; Սարգսեանց, Վեղարաւորը մեր կեանքում №80 1-2; Ահարոնեան Ա., 2; Սպենդիարեան Յ., 1; Մազմանեանց Ստ., 1-2):

Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի առաջին անդրադարձը «Քահանայական հարցին»

Այսպես, «Արարատի»՝ 1895 թվականի երրորդ՝ մարտ ամսվա համարում Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը տպագրում է հոդված «Հոգևորական ասպարէզը» վերտառությամբ (Կարապետ Վարդապետ, *Հոգեւորական ասպարէզը* 77-78): Հետաքրքրական է, որ նմանատիպ բովանդակությամբ հոդվածով է սկսվում ամսագիրը, «Արարատին» բնորոշ «Առաջնորդողի» փոխարեն: Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը գրում է, որ «Հոգևորականութեան խնդիրը ամենակարևոր և կենդանի խնդիրներից մէկն է մեզ համար և կմնայ դեռ երկար ժամանակ. իրականութեան մէջ նա երբէք լուծումն չի գտնի, մինչև որ մենք տեսականապէս չորոշենք այն գաղափարը, այն կատարելատիպը, որին հասնել պէտք է ձգտէ արժանաւոր հոգևորականը. . . . Այդ գաղափարը մութն է դեռ և ամենատարօրինակ կարծիքների առարկայ՝ գլխաւորապէս այն պատճառով, որ մենք նորան որոշելու համար չափը դրսից ենք բերում, փոխանակ նոյն իսկ հոգևոր կոչման մէջ որոնելու» (Կարապետ Վարդապետ, *Հոգեւորական ասպարէզը* 77):

Կարող ենք ասել, որ հոգևոր ասպարեզի և հոգևորականի վերաբերյալ կարծիքները հայ հասարակության շրջանում 19-րդ դարավերջին էլ դեռևս շատ տարբեր և իրականությունից բավական հեռու էին: Այսինքն՝ հասարակությունը մատնանշել էր հարցը, «տեսնում էր» առկա խնդիրը, քննարկումների միջոցով փորձում էր «լուծել» այն, սակայն, որ այս համատեքստում ամենակարևորն է, հասարակությունն ինքը չգիտեր, թե ո՞րն է իր պատկերացմամբ ճշմարիտ հոգևորականի հավաքական կերպարը և չուներ միասնական, հարցի լուծման՝ հասարակության լայն շերտերի կողմից հավանության արժանացած ընդհանրական տարբերակ:

Մայր Աթոռի պաշտոնաթերթի «Հրավէրը», հայ հրապարակախոսական մամուլն ու Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի տեսակետները «կղերականության» մեղադրանքի դեմ

«Արարատի»՝ 1895 թվականի ապրիլի համարում Ազգային բաժնի «Առաջնորդողով»՝ «Հրավէր» վերտառությամբ Մայր Աթոռի պաշտոնաթերթի խմբագրությունը բովանդակ հայ եկեղեցականությանը, Հայ եկեղեցու բոլոր թեմերից կոչ է անում թղթակցել «Արարատին», քանզի ««Արարատի» ի պաշտօնէ թղթակից է ամէն մի քահանայ, վարդապետ և առաջնորդ և ուսուցիչ,. . . » (ՀՐԱՒԷՐ 136): Այս «Առաջնորդողը» ոչ միանշանակ ընկալվեց: Կ. Պոլսի «Հայրենիքը» «Առաջնորդողի» հետևյալ հատվածի վերաբերյալ տալիս է հետաքրքիր մեկնաբանություն. «Կղերական զատ ցեղ մը (ֆասթ) հիմնել մեր մէջ, զատելով հայ եկեղեցականներու շահերը

ժողովրդին շահերէն, գիտութիւնը հալածել որպէսզի հնարաւոր ըլլայ ամբոխը գործածել կղերական շահերու, ահա այն ծրագիրը զոր «Արարատի» մէջ կը պարզեն Կարապետ Տէր-Մկրտիչեանները, Տ. Միքէլեանները, Նիկողոս Քարամեանները, ամենքն ալ Գերմանիայէն վերադարձած» (Զատ ցեղ մը 1): Հոդվածում ևս մեկ անգամ շեշտադրվում է այն միտքը, որ Գերմանիայում ուսանած հայ աստվածաբաններին և հնագետներին ամբողջապես հանձնված Մայր Աթոռի պաշտոնաթերթը, նման հայտարարություն անելով, փորձում է առանձնացնել հայ հոգևորականությանը հայ հասարակությունից, իսկ «Արարատի» համարների ուսումնասիրությունից կարելի է համոզվել «. . . թէ պէտք է աւելի յարգենք մեր գիւղական տգէտ տէրտէրը քան այդ ,,վաւերական,, աստուածաբանները» (Զատ ցեղ մը 1): «Հայրենիքը» «Արարատ» ամսագրի խմբագիրների վերոհիշյալ կոչի մեջ տեսնում է հայ մամուլի ուժը տկարացնելու գաղափարը, որովհետև ըստ «Հայրենիքի» հայ «անշահախնդիր թերթերը, որոնք ժողովրդին համարումը կը վայելեն, շատ ընդունակ են ճշմարտութիւնը պարզելու: Արարատին շնորհի՞ւն էր, որ հայ ազգը ճանչցաւ իր մաքուր եկեղեցականները, Արարատի շնորհի՞ւն էր, որ խարակուեցան թշուառականներ» (Զատ ցեղ մը 1):

«Արարատի»՝ 1895 թ. հուլիսի համարում Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը «Հայ հոգեւորականութեան մէջ կղերական ոգի որոնողները» (Կարապետ Վարդապետ, *Հայ հոգեւորականութեան* 250-254) վերտառությամբ հոդվածում անդրադառնում է «Մշակում» և «Հայրենիքում» հայ հոգևորականության դեմ արված այն մեղադրանքին, թե հոգևորականների կարգախոսն է՝ «Ո՛չ մի տեղ ժողովուրդը, ամէն տեղ կղերը» (Կարապետ Վարդապետ, *Հայ հոգեւորականութեան* 250-254; Մենք ժողովրդի հետ 1-2): «Մշակը» գրում է. «Նրանք (նկատի ունի հայ հոգևորականությանը- Ա. Ա.) այլ ևս չեն թագցնում, որ դէմ են ժողովրդին, նրա իրաւունքներին, նրա մասնակցութեան, նրա արտօնութիւններին: Նրանք սիստեմատիկաբար հալածում են ժողովրդին ամեն տեղից՝ դպրոցից, եկեղեցուց, ընտրողական դահլիճից: Այնտեղ, որտեղ պէտք է թագաւորէ ժողովրդի ձայնը, փորձում են հնչեցնել կղերի ձայնը: Այնտեղ, որտեղ որոշողը պէտք է լինի ժողովուրդը, այնտեղ տէր է հանդիսանում կղերը» (Մենք ժողովրդի հետ 2):

«Արարատի» խմբագրությունն ի պատասխան «Հայրենիքի» և «Մշակի» վերոհիշյալ մեղադրանքներին, գրում է, որ, ինչպես բնորոշ է զարգացող հասարակություններին, հայ հասարակությունը ևս տեսնում է միայն նյութի արտաքինը՝ առանց ներքինի մեջ խորանալու և բուն իրողությունը ըմբռնելու, տեսնելով կաթոլիկ եկեղեցում տեղի ունեցող իրողությունները՝ դրանք պրոյեկտում է Հայ եկեղեցու վրա և անում սխալ եզրակացություններ (Կարապետ Վարդապետ, *Հայ հոգեւորականութեան* 252-253):

Կուսակրոն հոգևորականության անհրաժեշտության վերաբերյալ քննարկումները 1898թ.

Հոգևորականների կրթության, Հայ եկեղեցում կուսակրոն հոգևորականների առկայության մասին քննարկումների նոր ալիք է սկսվել 1898 թ.: «Մշակը» 1898 թ. հունվարի 6-ի համարում (Ահարոնեան Ա., 2), անդրադառնալով Էջմիածնում կուսակրոն հոգևորականների գործունեությանն ու գոյությանն առհասարակ, գրում է, որ «Ուրիշ բան գաւառը, գիւղը չը գիտէ Էջմիածնի մասին. նա չէ ճանաչում իր հոգևորականներին, նրանց հասարակական գործունէութեան մասին համարեա ոչ մի գաղափար չունի, նրանց անհատական յատկութիւնները չափելու համար առանձին-առանձին չափեր չունի, նրա չափն ընդհանուր է, մի հատ է, և այդ այն է, որ կուսակրօն հոգևորականները իրանց համար ապրող մարդիկ են:… Նրանց կարծիքով, բոլոր եպիսկոպոսները կամ վարդապետները մի և նոյն մարդիկն են, նրանց մէջ տարբերութիւն չը կայ. մեռնում է մէկը, նրան կը յաջորդի ուրիշը, և իրերը կը

շարունակեն իրանց սովորական ընթացքը, արժէ այդ մասին մտածել անգամ» (Ահարոնեան Ա., 2): Ըստ «Մշակի»՝ հոգևորականները, հավանաբար, այս ամենի պատճառը գիտեն: Վերոհիշյալ ժամանակահատվածի «Արարատի» հոդվածների ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ, չլինելով կաղապարված և իրականությունից կտրված մի մարմին, Մայր Աթոռի պաշտոնաթերթի՝ «Արարատի» խմբագրությունը չէր խորշում խոսել Հայ եկեղեցում առկա, տասնամյակներ ձգվող խնդիրներից և դրանց լուծման հնարավոր տարբերակներից: Նշենք, որ Հայ եկեղեցու կարիքների, հոգևորականների և ընդհանրապես կրթության մասին եկեղեցին ինքը ձայն է բարձրացնում (Ի՞նչ կարիք ունի 81-83):

Բնավ չիերքելով և չփորձելով շրջանցել Հայ եկեղեցու կարևորագույն դերակատարումն ու դրանից բխող թերացումներն այս հարցի լուծման ուղղությամբ՝ «Արարատի» խմբագրությունը ուշադրություն է հրավիրում հատկապես հայ հասարակության մեջ տարածված առկա իրողության վրա, որի համատեքստում այդքան էլ գովելի և նյութական տեսանկյունից շահութաբեր գործ չէր հոգևորական դառնալն ու Հայ եկեղեցուն ու հասարակությանը ծառայելը: Ըստ «Արարատի» խմբագրության՝ գնալով ավելի էր խորանում արհամարհանքն ու հակակրանքը դեպի հոգևոր դասը, ի մասնավորի՝ «Մամուլի եւ գրականութեան մէջ մի քանի տասնեակ տարիների ընթացքում եկեղեցւոյ դէմ իբրեւ թէ նորա այլ եւ այլ թերութիւնները բառնալու նպատակաւ, վարած անմիտ կռիւը արձագանք է գտել ամբոխի գրեթէ բոլոր խաւերում՝ շոյելով շատ դէպքերում նորա ստոր հակումները. եւ ահա այսօր մարդիկ եւ իրողութիւններ արհամարհելի եւ պախարակելի են դառնում մի շարք մարդոց աչքում՝ մի միայն նորա համար, որ եկեղեցական անունն են կրում» (Ի՞նչ կարիք ունի 82):

«Մշակի»՝ 1898թ. մարտի 7-ի համարում Խ. Մալումյանի «Օրէցօր» (Մալումեան Խ., 2) հոդվածի տպագրումից հետո «քահանայական հարցը» կրկին սկսեց լայնորեն շրջանառվել: Խ. Մալումյանը մի կրթված երիտասարդի հոգևոր դասի շարքերը համալրելու հարցին ի պատասխան՝ կտրուկ և բացասական պատասխան է տալիս՝ իր բազմատեսակ օրինակներով համեմված խոսքն ամփոփելով հետևյալ մտքով. «Արդ, ինչպէս կարելի է խորհուրդ տալ ինտելիգէնտ մարդուն՝ մտնել մի շրջանի մէջ, ուր ուսում առած, օրինաւոր, ազնիւ մարդը միշտ նկատվում է իբրև «խորթ որդի», մի շրջան, որից ժողովուրդը չի գրաւվում, այլ երես է դարձնում: Այդպիսի խորհուրդ չէ կարելի տալ, և չը պէտք է տալ» (Մալումեան Խ., 2): Վերոհիշյալ հոդվածը այն կայծն էր, որից հետո ինչպես «Մշակի», այնպես էլ ժամանակի հայտնի այլ պարբերականների էջերում տպագրվեցին տարբեր հոդվածներ, նամակներ, որոնք տարաբնույթ տեսակետներ էին առաջ քաշում «քահանայական հարցի» վերաբերյալ: Համակողմանի ուսումնասիրության ենթարկելով ժամանակի հայ պարբերականների վերոհիշյալ շրջանի համարները՝ կարող ենք նշել, որ «քահանայական հարցի» վերաբերյալ հասարակության շրջանում տիրապետող էին մի քանի տեսակետներ: Առաջին տեսակետի կողմնակիցները շատ կտրուկ էին մոտենում հարցին և հոգևորականությանը համարելով այլևս իրեն սպառած դասակարգ՝ անիմաստ և անտեղի էին համարում կրթված երիտասարդների մուտքը հոգևոր դասի շարքերը (Խ. Մալումյան, Գ. Դավթյան, Ա. Հակոբյան և ուրիշներ) (Մալումեան Խ., 2; Դաւթեան Գ. 2; Նամակ խմբագրութեան № 114 2): Մյուս տեսակետի կողմնակիցները (Ա. Ահարոնյան, Լ. Սարգսյան, Մ. Տեր-Մկրտչյանց, Ստ. Մազմանյանց և ուրիշներ), ընդունելով և մատնանշելով հայ հոգևորականության շրջանում առկա խնդիրները, գտնում էին, որ Հայ եկեղեցին և հոգևորականությունը դեռ անելիք ունեն հայկական իրականության մեջ և դեռ կարող են մեծ ծառայություն մատուցել հայ ժողովրդին (Սարգսեանց, Վեղարաւորը №79 1-2; Սարգսեանց, Վեղարաւորը №80 1-2; Դաւթեան Ն., 2-3; Սպենդիարեան Յ., 1-2; Տէր-Մկրտչեանց Մ., 3; Մազմանեանց Ստ., 1-2; Մատթէոս վարդապետ, Ո՞րն է գերադասելի 2): Երրորդ տեսակետի կողմնակիցները, քննադատելով վերոհիշյալ երկու ուղղությունը (Բարեփոխել №100 2), հստակ նշում

էին հասարակության անելիքը հոգևորականության հարցի վերաբերյալ, որի համատեքստում առաջարկում էին իսպառ վերացնել կուսակրոնությունը Հայ եկեղեցում, սահմանել որոշակի վարձատրություն և, որ հետաքրքրական է մեզ համար, հստակ մատնանշում էին. «Կրթվածների վրա յոյս մի դնէք: Այժմ Էջմիածնում նստած են արտասահմանեան դիպլօմներ ունեցող աստուածաբաններ: Բայց ի՞նչ են նրանք ներկայացնում. այդ առանց մեր ասելու էլ հասկանալի է ամեն մեկի համար» (Բարեփոխել №101 2):

Հանուն արդարության պետք է նշել, որ «Մշակում» իր ձայնը բարձրացնելու հնարավորություն ուներ նաև Հայ եկեղեցին: 1898թ. «Մշակի» 110-րդ (Մարտիրոս քահանայ Զատիկեանց, №110 2) և 111-րդ համարներում տպագրված Մարտիրոս քահանա Զատիկյանցի «Ո՞րն է իսկական պատճառը» հոդվածներում հեղինակը, միանգամայն ընդունելով հայ հոգևորականության շրջանում առկա խնդիրներն ու բացերը, որպես դրանց լուծման տարբերակ առաջարկում է հետևյալ միտքը. «Միակ հնարը՝ մեր քահանայական դասը ներկայ ստոր վիճակից ազատելու և պատւաբեր բարձրութեան վրա նրան կանգնեցնելու,- այդ ռոճիկի հարցն է: Մինչև դրա հնարը չը գտնվի, զուր է սպասել քահանայական դասակարգի վերածնութիւնը» (Մարտիրոս քահանայ Զատիկեանց, №111 2): Այս և նաև «Արարատ» հանդեսում առկա նմանատիպ օրինակները, թույլ են տալիս հստակ մատնանշել, որ հայ հոգևորականության շատ ներկայացուցիչներ, այս համատեքստում հայ հոգևորականության դերի կարևորությունը (Մատթէոս վարդապետ, Հոգեւորականութիւնը իբրև 2-3) շեշտադրելուց զատ իրենք էլ անձամբ տեսնում և բարձրաձայնում էին Հայ եկեղեցում և հոգևոր դասի շրջանում առկա խնդիրները, չէին զբաղվում բացառապես խնդիրների առկայության մերժմամբ և, միանգամայն հավանական տարբերակ է, որ հասարակություն-եկեղեցի օրգանական կապի լավարկման և միմյանց լսելու ու համատեղ գործելու պարագայում հնարավոր կլիներ այդ անլուծելի թվացող և տվյալ ժամանակաշրջանի համար մեծ կարևորություն ունեցող հարցը դնել լուծման գործնական ընթացքի մեջ:

Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի «Աստուածաբաններ պէ՞տք են» հոդվածն ու «Մշակի» անդրադարձը

Հրապարակային քննարկումներին ի պատասխան՝ «Արարատի»՝ 1898թ. մայիսի համարում Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը տպագրում է «Աստուածաբաններ պէ՞տք են» հոդվածը: Այստեղ նա ևս մեկ անգամ արծարծում է այն միտքը, որ հայ հոգևորականության մասին դիտողություններ հենց իրենք՝ հոգևորականները, արել են և տեսնում են շատ բացեր ու դրանք քննարկում նաև հրապարակային՝ կարևորելով հոգևորականի դերի ճիշտ ընկալումը, հասարակության շրջանում հոգևորականության կարևորության շեշտադրումը (Կարապետ Վարդապետ, *Աստուածաբաններ* 199, Ի՞նչ կարիք 81-83): Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանն ինքն էլ ընդունում է, որ հոգևոր դասը ևս ունի իր բացթողումները, այստեղ ևս կան բացեր, թերացումներ, որոնք պետք է շտկել: Սակայն նման թիրախային վերտառությամբ հոդվածով Մայր Աթոռի պաշտոնաթերթում խնդրին անդրադառնալը հետևանք էր այն դիպվածի՝ «. . . երբ Տփխիսի պարբերական թերթերի մէջ բանակռուի նիւթ եղաւ այն հարցը, թէ արժէ՞ արդեօք, որ ուսումն առած ինտիլլիգենտ մարդիկ եկեղեցական ասպարէզ մտնեն:» (Կարապետ Վարդապետ, *Աստուածաբաններ* 199):

Կարապետ վարդապետ Տեր- Մկրտչյանը հերքում է հասարակության շրջանում և մամուլում տեղ գտած այն տեսակետը, թե հոգևորականության կարիքը չկա այլևս աշխարհի լուսավորյալ երկրներում, ինչը սպասվում է նաև Հայ եկեղեցուն: (Ղազարյան 57): Հանգամանորեն հերքում է նաև այնպիսի տեսակետներ, ինչպիսիք են՝ «. . . հոգեւորականը եկեղեցուն պէտք է չծառայէ. . . » (Կարապետ Վարդապետ, *Աստուածաբաններ* 199), «. . . հոգեւորականը պատրաստուած պէտք է լինի

հասարակութեան պէտքերի համեմատ՝ բժշկութիւն, երկրագործութիւն, այլ եւ այլ արհեստներ եւ գիտութիւններ սովորի, իսկ այն արհեստն ու գիտութիւնը, որ պահանջուում է եկեղեցում պաշտօն վարելու համար՝ կարող է, իբրեւ աւելորդ զարդ, չունենալ իսկ. . . » (Կարապետ Վարդապետ, *Աստուածաբանէր* 199) և այլն: Վերջինը Կարապետ վարդապետ Տեր- Մկրտչյանը համարում է հոգևորականության շուրջ առկա կարծիքներից ամենավտանգավորը:

Այս հոդվածի տպագրությունից հետո «Մշակի»՝ 1898 թ. 113 -րդ համարում տպագրվում է «Ինչու՞ ենք Ձեզ մեղադրում» (Նամակ գաւառից) վերտառությամբ փոքրիկ հոդվածը, որտեղ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի առաջ քաշած տեսակետների քննադատությունն ավարտվում է հետևյալ մտքով. «Այո՛, թղթի վրա կարելի է շատ գեղեցիկ բաներ գրել, շատ իմաստուն խօսքեր դէսից դէնից հաւաքել շարել, բայց այդ չէ եղել ձեզ աստուածաբանութիւն ուսանելու ուղարկողների ցանկութիւնը և հասարակական ձայնը-մամուլը ձեզանից արդիւնաւոր գործ է պահանջում: Իսկ ձեր գործը կամ վնասակար, կամ ապարդիւն է եղել, այդ պատճառով ժողովուրդը հիասթափված է ձեզանից-աստուածաբաններիցդ, և ահա՛ դրա համար էլ ձեզ մեղադրում է» (Ինչու՞ ենք 2): Վերոհիշյալից պարզ է դառնում, փաստորեն, որ, հոգևորականներին Եվրոպական համալսարաններ աստվածաբանություն ուսանելու ուղարկելիս հայ հասարակությունն այլ սպասելիքներ ուներ նրանցից (Սահակյան 13-14) և Էջմիածին վերադառնալուց հետո տարբերվող, գործնական, շոշափելի քայլեր ու փոփոխություններ էր ակնկալում վերջիններից: Հիշատակության է արժանի «Մշակի» հոդվածներից մեկը ևս, որտեղ, անկախ առկա տարատեսակ խնդիրներից, Հայ եկեղեցին դիտարկվում է որպես բարոյական հաստատություն: Այստեղ առաջարկ է արվում Էջմիածնում գումարել եկեղեցական համագումար ժողով՝ հոգևորականների և ժողովրդի ներկայացուցիչների մասնակցությամբ, քննարկել «քահանայական հարցը» և այդպիսով հասնել հասարակությանն ու եկեղեցուն տանջող հարցի լուծմանը (Կայ 1-2):

Թեմայի վերաբերյալ հետաքրքիր տեսակետներ ենք գտնում «Մշակի»՝ 1898 թ. 136-րդ և 137-րդ համարներում տպագրված «Կղերը առաջ և այժմ» վերնագրով հոդվածում (Սարգսեանց L., Կղերը №136 1-2; Սարգսեանց L., Կղերը №137 1-2): Հեղինակը, այստեղ վկայակոչելով նախորդիվ «Քահանայական հարցի» վերաբերյալ տպագրված մի քանի ծայրահեղ կարծիքներ, օրինակներ բերելով ժամանակի եվրոպական երկրներից, հասարակություններից, հստակեցնում է, որ եվրոպական երկրների օրինակները չի կարելի պրոյեկտել հայ հասարակության վրա, քանի որ մեզանում բոլորովին այլ աշխարհաքաղաքական իրավիճակ է, և հնարավորություններն այլ են. «Իսլամն ազգութիւն չէ ճանաչում, ուստի հայ-լուսաւորչականները, հայ-կաթոլիկները, հայ-բողոքականները Թիւրքիայում և Պարսկաստանում համարվում են առանձին կրօնական համայնքներ: Վեղարն այդ երկրներում, բացի սոսկ հոգևորական լինելուց, աշխարհական որոշ իշխանութեան ներկայացուցիչ է. նա ազգապետ է ճանաչվում» (Սարգսեանց L., Կղերը №136 2): Առավել հետաքրքրական է մեզ համար տեսնել ժամանակի «ինտելիգենցիայի» մեծամասնության կարծիքը ամբողջացնող հետևյալ տեսակետը աստվածաբանների վերաբերյալ. «Մենք չենք ուրանում, որ ռուսահայերիս կեանքում, Մակար կաթողիկոսի օրով, նկատելի ոյժ ստացաւ մի արուեստական հոսանք Էջմիածնում. կաթողիկոսի շուրջ խմբված մի քանի «ուսեալներ» Օրմանեանի օրինութեամբ ձեռնարկեցին պատրաստել մեր ժողովրդական եկեղեցու համար մի նոր պատուաստ. կղերական գերիշխանութիւն քարոզող նոր սերունդ: Մեր բոլոր եկեղեցական գործերում այդ օտարամուտ պատուաստը շուտով մտցրեց այնպիսի խառնաշփոթութիւն, որ Թիւրքիան անգամ կարող էր նախանձել» (Սարգսեանց L., Կղերը №137 2):

«Կրօնաւորներ պէ՞տք են» Հայ եկեղեցուն և հասարակությանը

«Արարատում» կուսակրոն հոգևորականների (վարդապետ, աբեղա) խնդրին անդրադարձ է կատարվում «Կրօնաւորներ պէ՞տք են» հոդվածով (Կրօնաւորներ 254-258): Խնդիրն այն է, որ հասարակության շրջանում թյուր ըմբռնումներ կային և՛ կրոնավորների, և՛, առհասարակ, հոգևորականների պատրաստության եղանակի վերաբերյալ: Եվ որ գլխավորն է, եթե հասարակության լայն շերտերը, ինչպես նաև մամուլում տպագրվող ժամանակի առաջադեմ հայտնի գործիչների մեծամասնությունը, խոսելով եկեղեցականների ոչ ճիշտ պատրաստության, ինչպես նաև առկա թերությունների մասին, այնուամենայնիվ ընդունում էին նրանց գոյության անհրաժեշտությունը, ապա «. . . կրօնաւորների նկատմամբ, ընդհակառակն, նաեւ քահանայական հարցի պաշտպաններից շատերը, . . . այն կարծիքին են, որ նոքա անզգայ, ժողովրդից կտրուած, ժողովրդի պէտքերին անծանոթ, եւ ոչինչ բանով գոհացում չտուող, ուրեմն եւ առհասարակ անպէտք եւ ձրիակեր մի դասակարգ են կազմում» (Կրօնաւորներ 254):

Ժամանակի մամուլում տեղ գտած հոդվածներից առանձնացնելով գրական, հասարակական գործիչ Լևոն Սարգսյանի «Վեղարաւորը մեր կեանքում» հոդվածը հայ հոգևորականության խնդրի վերաբերյալ՝ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը շեշտադրում է այն հանգամանքը, որ վերջինս հստակ առանձնացրել և անդրադարձ է կատարել հուզող հարցի երկու առավելապես ակնառու կետերին, որոնց քննարկման արդյունքում էլ հեղինակը կարողացել է տալ որոշակիորեն ռացիոնալ տեսակետ: Լ. Սարգսյանն այս առնչությամբ գրում է. «Իմ բոլոր էութեամբ դէմ լինելով կղերականութեան, այնուամենայնիւ համոզված եմ, որ ներկայ պայմաններում վեղարը կարող է, հրաժարվելով իր դասակարգային շահերից և «աստուածաբանութիւնից», մեծ ծառայութիւն մատուցանել մեր ժողովրդին, որովհետև դրա համար նա ունի իր ձեռքում այնպիսի միջոցներ, որոնցից շատ դէպքերում զուրկ է աշխարհականը» (Սարգսեանց Լ., Վեղարաւորը №80 1): Անհրաժեշտ է նկատել, որ ժամանակի տարբեր հոդվածներում մենք տեսնում ենք կուսակրոն հոգևորականությանը ժամանակավրեպ համարող և ապագայի հասարակարգում ոչ անհրաժեշտ ու պիտանի լինելու գաղափարը (Մալումեան Խ., 2; Սարգսեանց Լ., Վեղարաւորը №80 1; Նամակ խմբագրութեան №114 2), ինչին նախորդիվ անդրադարձ կատարել ենք: Եվ, եթե «քահանայական հարցի» շուրջ տեսնում ենք հակադիր, շատ տարբեր տեսակետներ, ապա կուսակրոն հոգևորականության շուրջ, սխալված չենք լինի եթե նշենք, որ «լուռ համաձայնություն» կար հասարակության լայն շերտերի շրջանում:

Ինչպես նկատում է Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, այս պարագայում ևս խնդիր է փաստի ոչ ճիշտ ըմբռնումն ու, հետևաբար, ոչ ճիշտ մեկնաբանությունը: Այսինքն՝ անհրաժեշտ է ուսումնասիրել հիմքերն ու ի վերջո հասկանալ՝ ո՞րն է կրոնավորության (կուսակրոն հոգևոր դասի) ձևավորման պատճառը, և ի՞նչ պայմաններում է այն դարձել քրիստոնեական եկեղեցու կարևորագույն շարժիչ ուժերից մեկը: Բացատրելով կրոնավորության բնույթն ու իրական նպատակը՝ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը չի խորշում խոսել նաև այն բացասականից, որին կարող է հանգեցնել կրոնավորի կյանքը: Ըստ նրա՝ կրոնավորի մոտ կարող է զարգանալ եսասիրությունը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել եսասիրությունից ծնվող այլ մոլորությունների (ամբարտավանություն, փառամոլություն, ընչասիրություն, նախանձ, նենգություն և այլն), որոնք, ըստ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի, շատ դեպքերում բավական հաճախ են հանդիպում կրոնավորների շրջանում: Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը նշում է, որ հայկական իրականության մեջ վանքերը ոչ թե աշխարհից կտրված, մարդկանց համար միանգամայն անպիտան հաստատություններ են, այլ «. . . հովանի ամեն տեսակ բարեգործական հաստատութեանց, կրթարան ու դպրատուն գրականութեան եւ գիտութեան ամենալաւ ներկայացուցիչների համար: Հայ կրօնաւորը ոչ հնումն եւ ո՛չ մինչեւ այս վերջին ժամանակները հեռու ու անջատուած չէ եղել իւր ժողովուրդից. »

(Կրօնաւորներ 256): Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանն ընդունում է, որ, միջին դարերից սկսած, հայ վանական կյանքը կրել է փոփոխություններ՝ ենթարկվելով օտար ազդեցությունների, սակայն պահպանել է իրական բնավորությունը, ինչը և ոչ մի պարագայում փոփոխման ենթակա չէ: Վերջինս շեշտադրում է, որ կրոնավորի ոգուն իրապես հավատարիմ վանականների թիվը գնալով պակասում է Հայ եկեղեցում տարբեր՝ ներքին և արտաքին գործոնների, ինչպես նաև հասարակության շրջանում կրոնավորների վերաբերյալ տարածվող կանխակալ վերաբերմունքի պատճառով:

Մեզանում այս համատեքստում որպես հիմնաքարային խնդիր Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը տեսնում է հասարակության շրջանում գաղափարի ոչ ճիշտ ըմբռնումն ու վերարտադրությունը. հայ հասարակության շրջանում մարդիկ դառնությամբ և լացով են ընդունում իրենց զավակի՝ կուսակրոն հոգևորականության շարքերը համալրելու փաստը, այնինչ պետք է դիտվեր հակառակ պարագան, մարդիկ, գիտակցելով և ընդունելով գաղափարի իսկությունը, չպետք է նման մոտեցում դրսևորեին: Հետևաբար կուսակրոնության շարքերն էին համալրում այնպիսի երիտասարդներ, «. . . որոնք այդ ասպարէզներն եւս իրենց շահի համար գործ դնել կաշխատեն» (Կրօնաւորներ 257): Այս ամենից ելնելով՝ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանն ընդունում էր, որ, այո, կան և «անգործ եւ ուրիշի հաշուով փարթամ կեանք վարող» (Կրօնաւորներ 257) վանականներ, բայց մի քանիսի օրինակով ողջ դասին նման կերպ բնորոշելը «անխիղճ զրպարտութիւն» (Կրօնաւորներ 257) է:

«Արարատի»՝ 1898 թ. օգոստոսյան համարում տպագրված «Կրկին քահանայական հարցը և աստուածաբանութիւնը» հոդվածում տարբեր օրինակներ բերելով՝ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը փորձում է ազատել Մայր Աթոռի աստվածաբանական կրթություն ստացած միաբաններին կղերականության մեղադրանքից: Վերջինս ընդգծում է, որ իրենք առաջին հերթին փորձում են պայքարել կղերականության դեմ, և իրենց հասցեին արված այդ մեղադրանքն իրականության հետ որևէ աղերս չունի (Կարապետ Վարդապետ, *Կրկին քահանայական* 344-345):

«Քահանայական հարցի» վերաբերյալ քննարկումները 1900 թվականին

Ավելի ուշ, «Արարատի»՝ 1900թ. հուլիսյան համարում տպագրված «Հին ցաւ» հոդվածում Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը անվանական հակադարձում է Լևոն Սարգսյանի «քահանայական հարցի» վերաբերյալ տեսակետներին, որոնք, եթե նախկինում լույս էին տեսնում «Մշակի» տարբեր համարներում, ապա 1900 թ. հեղինակը դրանք մեկ ընդհանրական գրքույկի տեսքով տպագրեց «Հին ցավ» (Սարգսեանց Լ., Հին ցաւ, 48) վերտառությամբ: Ընդհանրացնելով հոգևորականության վերաբերյալ Լ. Սարգսյանի և նրա գաղափարակիցների կարծիքը՝ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, որպես Մայր Աթոռում տարիներ ի վեր գործունեություն ծավալած 2 աստվածաբաններից 1-ինը, կարելի է ասել, «մեղադրանքն իր վրա է վերցնում» և փորձում հստակ կերպով հակադարձել այն մտայնությանը, թե Եվրոպայում աստվածաբանություն ուսանած հայ աստվածաբան-հոգևորականները, նոր՝ «արուեստական» հոսանք բերելով հայ հոգևորականության մեջ, առաջնորդվելով սեփական դասակարգային շահերով և աստվածաբանությամբ, քարոզում են «կղերական գերիշխանութիւն» (Կարապետ Վարդապետ, *Հին ցաւ* 338-343): Ընդհակառակը, կոչ անելով նմանատիպ կարևորության հարցերում վեր կանգնել անձնական և կուսակցական շահերից (Ասատրյան 63)՝ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը հստակեցնում է, որ. «Մենք (Նկատի ունի հայ հոգևորականներին և աստվածաբաններին-Ա. Ա.) երբէք կողմնակից չենք եղել ո՛չ հոգաբարձուներին դպրոցներից հեռացնելու, ո՛չ քահանայական եւ այլ խնդիրներում ժողովրդի ընտրողական իրաւունքը կարճելու եւ ո՛չ որեւ է ուրիշ ծրագրի, որ դէմ լինէր Հայոց եկեղեցու ազգային-ժողովրդական բնաւորութեան: Մենք պաշտպանել եւ քարոզել ենք միշտ այն սկզբունքը, որ քրիստոնէական եկեղեցւոյ մէջ հոգեւորականը

ո՛չ մի իրաւական առաւելութիւն չունի աշխարհականից. . . » (Կարապետ Վարդապետ, *Հին ցաւ* 341):

Եզրակացություն

Ընդհանրացնելով մեր ուսումնասիրությունը՝ կարող ենք նշել, որ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը 19-րդ դարավերջին հայ հասարակության լայն շրջանակներին զբաղեցրած «քահանայական հարցի» վերաբերյալ տվել է իր հստակ դիրքորոշումը, որը կարելի է տեսնել քննարկվող ժամանակաշրջանի Մայր Աթոռի պաշտոնաթերթի՝ «Արարատի» համարներում: Լինելով Մայր Աթոռի միաբան, վերոհիշյալ ժամանակահատվածում զբաղեցնելով նաև վարչական պաշտոններ՝ վերջինս հստակ, ընդգծված կերպով կարևորում է հոգևորականի մասնագիտական, տվյալ պարագայում՝ աստվածաբանական կրթություն ստանալը՝ միևնույն ժամանակ դա չհամարելով միակ և կարևորագույն նախապայմանը՝ հոգևոր դասի շարքերը համալրելու համար:

Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, վեր կանգնելով Մայր Աթոռի միաբանի իր դիրքից, աստվածաբանի, գիտնականի տեսանկյունից է փորձել անդրադառնալ խնդրին, չի կոծկել և չի փորձել շրջանցել Հայ եկեղեցու և հայ հոգևորականության ներսում առկա խնդիրները, հայ հոգևոր դասի դերի նսեմացումն ու հոգևորականության նկատմամբ հակակրանքի խորացումը:

Այսպիսով, որպես հոգևորական-գիտնական, ներսից տեսնելով խնդիրը՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը փորձել է առաջարկել խնդրի լուծման իր տարբերակը և իր հնարավորության սահմաններում նպաստել խնդրի լուծմանը: Անհրաժեշտ ենք համարում առանձնացնել նաև այն միտքը, որ քննարկվող ժամանակաշրջանում հայ հասարակությունն ուներ բոլորովին այլ սպասելիքներ աստվածաբանական կրթություն ստացած հայ հոգևորականներից:

Քննարկվող ժամանակաշրջանի հայ հրապարակախոսական և կրոնագիտական մամուլի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ և՛ Հայ եկեղեցին, և՛ հայ հասարակությունը նկատում էին այն անջրպետը, որը ժամանակի ընթացքում առաջացել էր և խոչընդոտում էր եկեղեցի-հասարակություն օրգանական կապի պահպանումը: Հայ հասարակությունը բոլորովին այլ դերակատարում էր ակնկալում Հայ եկեղեցուց:

Այնուամենայնիվ, մեղադրանքներ հասցեագրելուց զատ, հայ հասարակությունը ընդունում էր Հայ եկեղեցու ազգային և բարոյական հաստատություն լինելը, ինչպես նաև շեշտադրում այն փաստը, որ իսլամադավան երկրներում Հայ եկեղեցին սոսկ հոգևոր կառույց լինելուց անդին ուներ հայ բնակչության կարիքներից բխող անհերքելի աշխարհիկ գործառույթ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ահարոնեան Ա., *Սեփական գերեզմանափորներ,* «Մշակ», 1898, N 2, երեքշաբթի, յունվարի 6, էջ 2:
2. Ասատրյան, Անահիտ, *Կարապետ Տեր-Մկրտչյանը որպես Հայ Եկեղեցու բարենորոգիչ*, «Հայոց պատմության հարցեր», № 19, Երևան, 2018:
3. *«Արարատը» երեխաների ձեռքու*մ, «Մշակ», 1895, N 45, շաբաթ, ապրիլի 22, էջ 2:
4. *Բարեփոխել պէտք է,* «Մշակ», 1898, N 100, հինգշաբթի, յունիսի 11, էջ 2:
5. *Բարեփոխել պէտք է*, «Մշակ», 1898, N 101, ուրբաթ, յունիսի 12, էջ 2:
6. Դաւթեան Գ., *Հարցը միջոցին է վերաբերում*, «Մշակ», 1898, N 71, հինգշաբթի, ապրիլի 30, էջ 2:
7. Դաւթեան Ն., *Նամակ Բագուից*, «Մշակ», 1898, N 88, երեքշաբթի, մայիսի 26, էջ 2-3:
8. *Ջատ ցեղ մը*, «Հայրենիք», 1895, N 1182, չորեքշաբթի, յունիսի 7, էջ 1:

9. *Ի՞նչ կարիք ունի Հայոց եկեղեցին*, «Արարատ», 1898, փետրուար, էջ 81-83:

10. *Ինչու՞ ենք Ձեզ մեղադրում (Նամակ գաւառից),* «Մշակ», 1898, N 113, երեքշաբթի, յունիսի 30, էջ 2:

11. *Կայ և մի այլ միջոց (Նամակ խմբագրութեան),* «Մշակ», 1898, N 116, ուրբաթ, յուլիսի 3, էջ 1-2:

12. Կարապետ Վարդապետ *Աստուածաբաններ պէ՞տք են*, «Արարատ», 1898, մայիս, էջ 199:

13. ---. *Կրկին քահանայական հարցը և աստուածաբանութիւնը*, «Արարատ», 1898, օգոստոս, էջ 344- 345:

14. ---. *Հայ հոգևորականութեան մէջ կղերական ոգի որոնողները,* «Արարատ», 1895, յուլիս, էջ 250-254:

15. ---. *Հին ցաւ*, «Արարատ», 1900, յուլիս, էջ 338-343:

16. ---. *Հոգեւորական ասպարէզը*, «Արարատ», ԻԸ տարի, 1895, մարտ, էջ 77-78:

17. *Կրօնավորներ պէ՞տք են*, «Արարատ», 1898, յունիս, էջ 254-258:

18. Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 312, ցուցակ 1, գործ 27, թերթ 1:

19. *Հանգիստ թողէք ուսուցիչներին*, «Մշակ», 1895, N 55, երեքշաբթի, մայիսի 16, էջ 2-3:

20. *ՀՐԱՒԷՐ*, «Արարատ», 1895, ապրիլ, էջ 136:

21. Ղազարյան Խաչիկ Ռաֆֆի, *Բարեկորոգչական նախաձեռնությունները Հայ առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, Ս.* Էջմիածին, 1999:

22. Մազմանեանց Ստ., *Առօրեայ ցաւերի շուրջը*, «Մշակ», 1898, N 95, հինգշաբթի, յունիսի 4, էջ 1-2:

23. Մալումեան Խ., *Օրէցօր*, «Մշակ», 1898, N 36, շաբաթ, մարտի 7, էջ 2:

24. Մատթէոս վարդապետ, *Հոգևորականութիւնը իբրև գործող մարմին (Նամակ խմբագրութեան),* «Մշակ», 1898, N 120, հինգշաբթի, յուլիսի 17, էջ 2-3:

25. Մատթէոս վարդապետ, *Ո՞րն է գերադասելի,* «Մշակ», 1898, N 99, չորեքշաբթի, յունիսի 10, էջ 2:

26. Մարտիրոս քահանայ Ջատիկեանց, *Ո՞րն է իսկական պատճառը (Նամակ խմբագրութեան),* «Մշակ», 1898, N 110, հինգշաբթի, յունիսի 25, էջ 2:

27. Մարտիրոս քահանայ Ջատիկեանց, *Ո՞րն է իսկական պատճառը (Նամակ խմբագրութեան),* «Մշակ», 1898, N 111, ուրբաթ, յունիսի 26, էջ 2:

28. *Մենք ժողովրդի հետ, Դուք կղերի հետ*, «Մշակ», 1895, N 72, շաբաթ, հունիսի 24, էջ 1-2:

29. *Մեր պահանջը*, «Մշակ», 1895, N 35, շաբաթ, մարտի 25, էջ 3:

30. *Մի քանի խօսք «Արարատի» խմբագրութեան*, «Մշակ», 1895, N 50, հինգշաբթի, մայիսի 4, էջ 2:

31. *Նամակ խմբագրութեան*, «Մշակ», 1898, N 114, չորեքշաբթի, յուլիսի 1, էջ 2:

32. *Պաշտօնական*, «Արարատ», 1894, դեկտեմբեր, էջ 388-389:

33. Սահակյան Նարե, *Եկեղեցու կարգն ու ժողովրդի բարքը. Կարապետ Տեր-Մկրտչյան և Գալուստ Տեր-Մկրտչյան(Միաբան),* Երևան, 2021:

34. Սարգսեանց Լևոն, *Կղերը առաջ և այժմ (Նամակ խմբագրութեան),* «Մշակ», 1898, N 136, շաբաթ, օգոստոսի 1, էջ 1-2:

35. Սարգսեանց Լևոն, *Կղերը առաջ և այժմ (Նամակ խմբագրութեան),* «Մշակ», 1898, N 137, երեքշաբթի, օգոստոսի 4:

36. Սարգսեանց Լևոն, *Հին ցաւ (Հրապարակախօսական խոհեր),* Մոսկուա: Վարվառէ Գատյուկ, 1900:

37. Սարգսեանց Լևոն, *Վեղարաւորը մեր կեանքում*, «Մշակ», 1898, N 79, երեքշաբթի, մայիսի 12, էջ 1-2:

38. Սարգսեանց Լևոն, *Վեղարաւորը մեր կեանքում*, «Մշակ», 1898, N 80, չորեքշաբթի, մայիսի 13, էջ 1-2:

39. Սպենդիարեան Յ., *Այրող հարցը*, «Մշակ», 1898, N 89, չորեքշաբթի, մայիսի 27, էջ 1:

40. *Վաւերագրեր Հայ եկեղեցու Պատմութեան*, Գէորգ Ե Վշտալի Սուրէնեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847-1930), Գիրք ԺԴ, Երևան, 2006:

41. Տէր-Մինասեանց Ե., *Կարապետ Տէր-Մկրտչեան, Կեանքն ու Գործունեութիւնը,* Մոսկուա, 1911:

42. Տէր-Մկրտչեանց Մ., *Նամակ խմբագրութեան*, «Մշակ», 1898, N 92, շաբաթ, մայիսի 30, էջ 3:

43. «*Քրիստոնյա Հայաստան*» հանրագիտարան, Երևան, 2002:

44. Օրմանեան Մաղաքիա, *Ազգապատում*, հատոր Գ, Պէյրութ, 1961:

WORKS CITED

1. Aharonean A., Sep'akan gerezmanap'orner, «Mshak», 1898, N 2, ereqshabt'i, yunvari 6, e'j 2, [*Gravediggers of Their Own*]. (In Armenian)

2. «Araraty'» erexaneri d'er'qum, «Mshak», 1895, N 45, shabat', aprili 22, e'j 2, [*"Ararat" in the Hands of Children*, *Mshak*,]. (In Armenian)

3. Ar'o'reay caweri shurjy', «Mshak», 1898, N 95, hingshabt'i, yunisi 4, e'j 1-2, [*On Everyday Pains*]. (In Armenian)

4. Asatryan A., Karapet Ter-Mkrtchyany' vorpes Hay Ekeghecu barenorogich, «Hayoc patmut'yan harcer», № 19, Erevan, 2018, [*Karapet Ter-Mkrtchyan as a Reformer of the Armenian Church*, *Issues of Armenian History*, Yerevan]. (In Armenian)

5. Barep'oxel pe'tq e', «Mshak», 1898, N 100, hingshabt'i, yunisi 11, e'j 2, [*Reform Is Necessary*]. (In Armenian)

6. Barep'oxel pe'tq e', «Mshak», 1898, N 101, urbat', yunisi 12, e'j 2, [*Reform Is Necessary*]. (In Armenian)

7. Davtean G., Harcy' mijocin e' veraberum, «Mshak», 1898, N 71, hingshabt'i, aprili 30, e'j 2, [*The Question Concerns the Means*]. (In Armenian)

8. Davtean N., Namak Baguic, «Mshak», 1898, N 88, ereqshabt'i, mayisi 26, e'j 2-3, [*Letter from Baku*]. (In Armenian)

9. Ghazaryan Xachik Raffi, Barenorogchakan naxad'er'nut'yunnery' Hay ar'aqelakan ekeghecum 19-rd dari verjin qar'ordin ev 20-rd dari ar'ajin kesin, S. E'jmiac'in, 1999, [Reform initiatives in the Armenian Apostolic Church during the last quarter of the 19th and the first half of the 20th centuries, Mother See of Holy Etchmiadzin]. (In Armenian)

10. Hangist t'oghe'q usucichnerin, «Mshak», 1895, N 55, ereqshabt'i, mayisi 16, e'j 2-3, [*Leave the Teachers in Peace*]. (In Armenian)

11. Hayastani azgayin arxiv, fond 312, cucak 1, gorc' 27, t'ert' 1, [National Archives of Armenia]. (In Armenian)

12. HRAWE'R, «Ararat», 1895, april, e'j 136, [*Invitation*]. (In Armenian)

13. Inch kariq uni Hayoc ekeghecin, «Ararat», 1898, p'etrwar, e'j 81-83, [*What Does the Armenian Church Need?*]. (In Armenian)

14. Inchu enq D'ez meghadrum (Namak gawar'ic), «Mshak», 1898, N 113, ereqshabt'i, yunisi 30, e'j 2, [*Why Do We Accuse You? (Letter from the Province)*]. (In Armenian)

15. Karapet Vardapet, Astuac'abanner pe՞tq en, «Ararat», 1898, mayis, e'j 199, [*Are Theologians Necessary?*]. (In Armenian)

16. ---. Hay hogevorakanut'ean me'j kgherakan ogi voronoghnery', «Ararat», 1895, yulis, e'j 250-254, [*Those Who Seek a Clerical Spirit in the Armenian Clergy.*]. (In Armenian)

17. ---. Hin caw, «Ararat», 1900, yulis, e'j 338-343, [*An Old Pain*].

18. ---. Hogeworakan aspare'zy', «Ararat», IY' tari, 1895, mart, e'j 77-78, [*The Ecclesiastical Vocation*]. (In Armenian)

19. ---. Krkin qahanayakan harcy' ev astuac'abanut'iuny', «Ararat», 1898, o'gostos, e'j 344- 345, [*Once Again on the Priestly Question and Theology*]. (In Armenian)

20. Kay ev mi ayl mijoc (Namak xmbagrut'ean), «Mshak», 1898, N 116, urbat', yulisi 3, e'j 1-2, [*There Is Another Means (Letter to the Editor)*]. (In Armenian)

21. Kro'navorner peʻtq en, «Ararat», 1898, yunis, e'j 254-258, [*Are Monastics Necessary?*]. (In Armenian)

22. Malumean Kh., Orecor, «Mshak», 1898, N 36, shabat', marti 7, e'j 2, [*Day by Day*]. (In Armenian)

23. Martiros qahanay Zatikeanc, Vorn e' iskakan pattchar'y' (Namak xmbagrut'ean), «Mshak», 1898, N 110, hingshabt'i, yunisi 25, e'j 2, [*What Is the Real Cause? (Letter to the Editor)*]. (In Armenian)

24. Martiros qahanay Zatikeanc, Voʻrn e' iskakan pattchar'y' (Namak xmbagrut'ean), «Mshak», 1898, N 111, owrbat', yunisi 26, e'j 2, [*What Is the Real Cause? (Letter to the Editor)*]. (In Armenian)

25. Matteos vardapet, Hogevorakanut'iuny' ibrev gorc'ogh marmin (Namak xmbagrut'ean), «Mshak», 1898, N 120, hingshabt'i, yulisi 17, e'j 2-3, [*The Clergy as an Active Body (Letter to the Editor)*]. (In Armenian)

26. Matteos vardapet, Vorn e' geradaseli, «Mshak», 1898, N 99, choreqshabt'i, yunisi 10, e'j 2, [*Which Is Preferable?*]. (In Armenian)

27. Menq jhoghovrdi het, Duq kgheri het, «Mshak», 1895, N 72, shabat', hunisi 24, e'j 1-2, [*We Are with the People, You Are with the Clergy*]. (In Armenian)

28. Mer pahanjy', «Mshak», 1895, N 35, shabat', marti 25, e'j 3, [*Our Demand*]. (In Armenian)

29. Mi qani xo'sq «Ararati» xmbagrut'ean, «Mshak», 1895, N 50, hingshabt'i, mayisi 4, e'j 2, [*A Few Words to the Editorial Board of "Ararat"*]. (In Armenian)

30. Namak xmbagrut'ean, «Mshak», 1898, N 114, choreqshabt'i, yulisi 1, e'j 2, [*Letter to the Editor*]. (In Armenian)

31. O'rmanean Maghaqia, Azgapatum, hator G, Pe'yrut', 1961, [*Azgapatum, Beyrut*]. (In Armenian)

32. Pashto'nakan, «Ararat», 1894, dektember, e'j 388-389, [*Official*]. (In Armenian)

33. Sahakyan Nare, Ekeghecu kargn u jhoghovrdi barqy'. Karapet Ter-Mkrtchyan ev Galust Ter-Mkrtchyan (Miaban), Erevan, 2021, [*The Order of the Church and the Morality of the People: Karapet Ter-Mkrtchyan and Galust Ter-Mkrtchyan (Monk, Yerevan)*]. (In Armenian)

34. Sargseanc Levon, Kghery' ar'aj ev ayjhm (Namak xmbagrut'ean), «Mshak», 1898, N 136, shabat', o'gostosi 1, e'j 1-2, [*The Clergy Then and Now (Letter to the Editor)*]. (In Armenian)

35. Sargseanc Levon, Kghery' ar'aj ev ayjhm (Namak xmbagrut'ean), «Mshak», 1898, N 137, ereqshabt'i, o'gostosi 4, [*The Clergy Then and Now (Letter to the Editor)*]. (In Armenian)

36. Sargseanc Levon, Hin cav (Hraparakaxo'sakan xoher), Moskowa: Varvar'e' Gatyuk, 1900, [*An Old Pain (Publicistic Reflections),* Moscow]. (In Armenian)

37. Sargseanc Levon, Vegharawory' mer keanqum, «Mshak», 1898, N 79, ereqshabt'i, mayisi 12, e'j 1-2, [*The Veil-Bearer in Our Life*]. (In Armenian)

38. Sargseanc Levon, Vegharawory' mer keanqum, «Mshak», 1898, N 80, choreqshabt'i, mayisi 13, e'j 1-2, [*The Veil-Bearer in Our Life*]. (In Armenian)

39. Spendiarean J., Ayrogh harcy', «Mshak», 1898, N 89, choreqshabt'i, mayisi 27, e'j 1, [*The Burning Question*]. (In Armenian)

40. «Qristonya Hayastan» hanragitaran, Erevan, 2002, [*Christian Armenia: Encyclopedia*, Yerevan]. (In Armenian)

41. Te'r-Minaseanc E. , Karapet Te'r-Mkrtchean, Keanqn u Gorc'uneut'iuny', Moskua, 1911, [*Karapet Ter-Mkrtchyan: His Life and Activity*, Moscow]. (In Armenian)
42. Ter-Mkrtcheanc M., Namak xmbagrut'ean, «Mshak», 1898, N 92, shabat', mayisi 30, e'j 3, [*Letter to the Editor*]. (In Armenian)
43. Vaweragrer Hay ekeghecu Patmut'ean, Gevorg E Vshtali Sure'neanc Kat'oghikos Amenayn Hayoc (1847-1930), Girq JhD, Erevan, 2006, [*Documents on the History of the Armenian Church, Yerevan*]. (In Armenian)
44. Zat cegh my', «Hayreniq», 1895, N 1182, choreqshabt'i, yunisi 7, e'j 1, [*A Separate Nation*]. (In Armenian)

THE DISCOURSE ON THE ROLE OF THE CHURCH AND THE IMAGE OF THE CLERGYMAN IN THE PUBLICISTIC WRITINGS OF BISHOP KARAPET TER-MKRTCHYAN

ANAHIT ASATRYAN
Office of the High Commissioner for
Diaspora Affairs of the Republic of Armenia,
Repatriates Integration Department, Senior Specialist,
Yerevan, the Republic of Armenia

The aim of this article is to examine the viewpoints widely circulating within Armenian society in the last decade of the nineteenth century concerning the so-called “priestly question”, as reflected in Armenian religious and periodical press, as well as to present and analyze the approaches of Bishop Karapet Ter-Mkrtchyan – a monk of the Mother See, a theologian, and, during the period under consideration, the editor of the official organ of the Mother See, the journal *Ararat*.

Through an analysis of the articles published by Bishop Karapet Ter-Mkrtchyan in *Ararat* between 1895 and 1900, the study elucidates his views on the role of the Armenian Church and the clergyman, the reform of the ecclesiastical estate, and the existence and necessity of celibate clergy.

In order to identify the opinions circulating in the Armenian publicistic press of the period, the study examines the newspapers *Mshak*, published in Tiflis, and *Hayrenik*, published in Constantinople. The selection of these publications is their undeniable influence on the formation of public opinion among the Armenian population in its eastern and western segments, respectively.

The study employs methods of chronological presentation and comparative analysis.

Thus, within the framework of the study, by examining the discourse on the “Priestly Question” in the pages of the publicist press, both within the spiritual class of the Armenian Church and in the discussions among the spiritual-secular classes, and by thoroughly analyzing the publicist activity and viewpoint of Bishop Karapet Ter-Mkrtchyan regarding the aforementioned issue, we can affirm that he has shown the most objective approach to the discussed matter, without denying the problems that exist within the Armenian Church and the spiritual class. In his publications, Bishop Karapet Ter-Mkrtchyan, by highlighting the presence of the aforementioned issues, proposes the primary solution to the problem as the importance of improving the educational system within Armenian reality, both inside the Armenian clergy and within the general Armenian society. According to Bishop Karapet Ter-Mkrtchyan, the gap that existed between the Armenian Church and society, which was particularly evident at the end of the 19th

century, could be eliminated through the reform of the educational system in Armenian reality and the enhancement of the educational level of Armenian society.

Keywords: *Bishop Karapet Ter-Mkrtchyan, “priestly question”, “Ararat”, “Mshak”, “Hayrenik”, religious figure, theologian, clergy, clergyman.*

ДИСКУРС О РОЛИ ЦЕРКВИ И ОБРАЗЕ СВЯЩЕННОСЛУЖИТЕЛЯ В ПУБЛИЦИСТИКЕ ЕПИСКОПА КАРАПЕТА ТЕР-МКРТЧЯНА

АНАИТ АСАТРЯН
Офис Главного уполномоченного по делам диаспоры Республики Армения, старший специалист отдела интеграции репатриантов, г. Ереван, Республика Армения

Цель статьи — изучение взглядов, обсуждавшихся в армянской религиозной и периодической печати по поводу широко распространённого в последнем десятилетии XIX века «вопроса о священстве», а также представление и анализ подходов Карапета вардапета Тер-Мкртчяна — богослова, члена братии Эчмиадзина и редактора официального органа Мацнакарана «Арарат» в рассматриваемый период.

На основе анализа статей Карапета вардапета Тер-Мкртчяна, опубликованных в журнале «Арарат» в 1895–1900 гг., представлены его взгляды на роль Армянской церкви и духовенства, реформирование духовного сословия, существование и необходимость целибатного духовенства. С целью выявления мнений, циркулировавших в армянской публицистической прессе рассматриваемого периода, проведено исследование газет "Мшак", издававшейся в Тифлисе, и "Айреник", издававшейся в Константинополе. Выбор указанных изданий обусловлен их несомненным влиянием на формирование общественного мнения среди армянского населения соответственно в восточной и западной его частях.

В исследовании применены методы хронологического изложения событий и сравнительного анализа.

Таким образом, обращаясь к диалогу, сложившемуся на страницах публицистической печати как внутри духовного сословия Армянской церкви, так и в дискуссиях между духовным и светским слоями общества по поводу «вопроса о священстве», и всесторонне анализируя публицистическую деятельность и взгляды Карапета вардапета Тер-Мкртчяна, можно утверждать, что он проявил максимально объективный подход: не отрицая существующих проблем внутри Армянской церкви и духовного сословия, он, как духовное лицо, указывал на их наличие и предлагал главным решением реформирование образовательной сферы в армянской действительности — как внутри духовного сословия, так и в обществе в целом.

По мнению вардапета Карапета Тер-Мкртчяна, разрыв между Армянской Церковью и обществом, который был особенно заметен в конце XIX века, мог быть устранен через реформу образовательной системы и повышение уровня образования армянского общества.

Ключевые слова: *епископ Карапет Тер-Мкртчян,* «Вопроса священства», «*Арарат*», «*Мшак*», «*Айреник*», *религиозный деятель, богослов, духовенство, священнослужитель.*